

**ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ ԵՂԱՆԱԿԻ ԽՍՏՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՈՎ ՉՄԵՌԱՅԻՆ ՍԵԶՈՆԻ ՍՈՒՐ
ԴԻՄԿՈՍՖՈՐՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Դավթյան Պ. Գ., Դավթյան Տ. Պ., Վարդանյան Ա. Հ.**

Աշխատանքում Բողմանի առաջարկած բանաձևով որոշվել է Զանգեզուրի տարածաշրջանի եղանակի խստության ցուցանիշը: Վերջինս հնարավորություն է տալիս բնութագրելու ձմեռային սեզոնի ցուրտ դիսկոմֆորտայնությունը, որը ցուցանիշ է տարածքի դիսկոմֆորտայնությունը և մարդու առողջության վրա ունեցած ազդեցությունը որոշելու համար:

Բանալի բառեր. եղանակի խստություն, դիսկոմֆորտայնություն, ձմեռային սեզոն, լանդշաֆտային գոտիներ:

Նախաբան: Որևէ տարածքի կլիմայական առանձնահատկությունների ուսումնասիրությունը համարվում է բժշկաաշխարհագրական գիտության հիմնական խնդիրը: Խնդրի էությունը այն է, որ օդերևութաբանական տվյալների հենքի միջոցով հնարավոր է գնահատել մարդու օրգանիզմի վրա կլիմայի ազդեցությունը:

Միայն կլիմայական գործոնների որոշակի համապատասխանության դեպքում շրջակա միջավայրը կարող է համարվել օպտիմալ (կոմֆորտ) մարդու համար: Եթե փոխվում է գործոնների ազդեցության կազմությունը կամ ինտենսիվությունը, ապա խախտվում է մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի հարմոնալ հավասարակշռությունը [1]: Այս դեպքում լարվածություն է առաջանում մարդու օրգանիզմի ադապտացիայի և շրջակա միջավայրի միջև, այսինքն՝ արտաքին փոփոխությունները չեն հասցվում օրգանիզմի ներքին փոփոխությանը: Հետևաբար մարդու մոտ առաջանում են տարբեր բնույթի հիվանդություններ: Սա ավելի արտահայտված է օդերևութաբանական

պայմաններից կախում ունեցող մարդկանց մոտ: Հետևաբար տարածքի կոմֆորտայնության որոշումը արդիական է, ստացված տվյալները կարելի է օգտագործել ուսումնասիրվող տարածքում սոցիալական միջոցառումների համար, ինչպես նաև ապահովել բնակչությանը եղանակային պայմանների՝ մարդու առողջության վրա ունեցող ազդեցության տեղեկատվությամբ [2]:

Որևէ տարածքի կլիմայական կոմֆորտայնության գնահատումը հիմքում ունի ինչպես մասնավոր կլիմայական և բիոկլիմայական, այնպես էլ ինտեգրալ ցուցանիշներ, որոնք բնութագրում են դրանց նպաստավոր ազդեցության աստիճանը մարդու վրա:

Խնդրի դրվածք: Մեր հետազոտությունը կլիմայական պայմանների մասնավոր ցուցանիշներից՝ եղանակի խստությանն է վերաբերում, որի գնահատումը այլ գործոնների հետ հիմք կհանդիսանա տարածքի կոմֆորտայնության ինտեգրալ գնահատման համար: Հետևաբար աշխատանքի առջև խնդիր է դրվել հաշվարկել (ըստ Բոգմանի), վերլուծել և գնահատել Ջանգեգուրի տարածաշրջանի ձմեռային սեզոնի եղանակի խստության ցուցանիշը:

Հետազոտության մեթոդիկան: Ուսումնասիրվող տարածքում ձմեռային սեզոնի սուր դիսկոմֆորտայնությունը հաշվարկելու և գնահատելու համար օգտագործել ենք Բոգմանի առաջարկած բանաձևը: Այն ունի հետևյալ տեսքը՝

$$S = (1 - 0.04T) * (1 + 0.272V),$$

որտեղ S -ը խիստ եղանակի ցուցանիշն է, T -ն օդի միջին ամսական ջերմաստիճանը C^0 , V քամու միջին արագությունը մ/վրկ [3]: Ստացված ցուցանիշները համեմատել ենք Ջոլոտոկրիլինի և ուրիշների (1992) ստացած տվյալների հետ, որոնք ցուցաբերել են հետևյալ մոտեցումը. $S \geq 4,5$ համարել են շատ խիստ, $S \geq 3,5$ ՝ խիստ, $S \geq 2,5$ ՝ թույլ խիստ, և $S \geq 1,5$ ՝ ոչ խիստ: Համեմատության արդյունքում ստացված տվյալները մեզ հնարավորություն են տվել դասակարգել մարզի տարածքը ըստ կլիմայի պայմանների սահմանափակ կոմֆորտայնության, այլ կերպ ասած՝ դիսկոմֆորտայնության:

Արդյունքները և դրանց վերլուծությունը: Հիմք ընդունելով մեր կողմից կատարված հաշվարկից ստացած արդյունքները՝ կարող ենք կատարել հետևյալ վերլուծությունը: Նախ նշենք, որ մարզի տարածքը աչքի չի ընկնում դաժան կամ խիստ ձմեռներով, ավելին՝ որոշ լանդշաֆտային գոտիներում դիտվում են թույլ ձմեռներ: Այսպես, կիսաանապատային գոտում խստության ցուցանիշը կազմում է

ընդամենը 1.1, որը դասվում է մեղմ շարքին: Պետք է նշել, որ նկատվում է ցուցանիշի վերընթաց փոփոխություն: Կիսաանապատում այն կազմում է 1.1, որը, ըստ բարձրության, ավելանում է ձյունամերձ գոտում՝ հասնելով 1.7-ի (տես աղյուսակ 1): Բացառություն է կազմում միայն լեռնասևահողային տափաստանային գոտին, որտեղ ցուցանիշը չի ենթարկվում օրինաչափությանը՝ կազմելով 1.6: Մեր կարծիքով՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նախ՝ տարածքը ընդգրկում է միջլեռնային գոգավորությունները՝ Սիսիանի, Եռաբլուրի, Ակնաղաշտի, որտեղ ձմեռային ամիսներին նկատվում են ինվերսիոն երևույթներ, և երկրորդ՝ նշված տարածքների հարևանությամբ են գտնվում մարզի բարձր լեռնանցքներ (Որոտանի, Սիսիանի). այստեղ մեծ պոռթկումներ ունեն քամիները: Քամիների մշտական առկայությունը և ցածր ջերմաստիճանը պատճառ են հանդիսացել վերոհիշյալ շեղմանը: Բոլոր դեպքերում կարող ենք նշել, որ մարզի տարածքի ձմեռները նպաստավոր են մարդու առողջության և ձմեռային տուրիզմի զարգացման համար, և առանձնապես մեծ դիսկոմֆորտայնության պատճառ չեն կարող հանդիսանալ:

Աղյուսակ 1:

Ձմեռային սեզոնի եղանակի խստության, ցուրտ դիսկոմֆորտայնության ցուցանիշները

Լանդշաֆտային գոտիներ	ամիսներ			
	հունվար	փետրվար	դեկտեմբեր	ձմեռվա միջին
Կիսաանապատային	1.1	0.9	1.2	1.1
Չոր տափաստանային	1.64	1.2	1.1	1.2
Լեռնասևահողային տափաստաններ	1.7	1.6	1.5	1.6
Լեռնանտառային	1.5	1.6	1.4	1.5
Լեռնամարգագետնային	1.6	1.6	1.5	1.6
ձյունամերձ	1.8	1.7	1.7	1.7

Սակայն պետք է նշել, որ վերլուծությունը կատարված է բազմամյա միջին տվյալներով: Առանձին տարիներին քննարկվող տարածքում նկատվում են բավականին խիստ ձմեռներ, և՛ տարիները անցնում են 3-ից (2006թ., 2008թ.), և՛ ձմեռները համարվում են խիստ: Այդպիսի տարիների շարքին են դասվում 2004, 2006, 2008, 2012, 2016, 2017 թթ.:

Այսպիսի տարիների թվով աչքի են ընկնում լեռնասահողային տափաստան, լեռնամարգագետնային և ձյունամերձ լանդշաֆտային գոտիները: Ավելի քիչ այդպիսի տարիներ առկա են կիսաանապատային, չոր տափաստանային և լեռնանտառային գոտիներում: Այսպես, կիսաանապատային գոտում այդպիսի օրերի ապահովվածությունը 5%-ից 10%, իսկ լեռնասահողային տափաստաններում և ձյունամերձ գոտում՝ 30%-ից 35%, սա նշանակում է, որ այս գոտիներում ձմռան ամիսներին 1/3-ը լինում են խիստ (տես աղյուսակ 2):

Այս վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս որոշելու ձմեռային կամ սառը դիսկոմֆորտայնությունը: Վերջինս շատ կարևոր նշանակություն ունի տարածքի կոմֆորտայնությունը որոշելու և, որ ամենակարևորն է, գնահատելու մարդու առողջության վրա ունեցած ազդեցության և ռեկրեացիոն գոտիների ստեղծման, ձմեռային տուրիզմի զարգացման համար:

Աղյուսակ 2:

Խիստ ձմեռներով դիտված օրերի թիվը և ապահովվածությունը ըստ լանդշաֆտային գոտիների

Լանդշաֆտային գոտիներ	Սմիսներ					
	հունվար		փետրվար		դեկտեմբեր	
	դեպքերի թիվ	ապահովվածություն	դեպքերի թիվ	ապահովվածություն	դեպքերի թիվ	ապահովվածություն
Կիսաանապատային	1	5%	-	-	2	10%
Չոր տափաստանային	2	10%	2	10%	2	10%
Լեռնասահողային տափաստաններ	7	55%	6	30%	6	30%
Լեռնանտառային	4	20%	4	20%	4	20%
Լեռնամարգագետնային	5	25%	3	15%	5	25%
ձյունամերձ	6	30%	7	35%	5	25%

Եզրակացություն: Այսպիսով, հիմք ընդունելով կատարված վերլուծությունը և գնահատումը՝ կարող ենք նշել, որ մարզի տարածքը ընդհանուր առմամբ աչքի չի ընկնում խիստ ձմեռներով՝ չհաշված առանձին տարիներ, հետևաբար այն ձմեռային սեզոնի համար ունի նպաստավոր պայմաններ մարդու առողջության և ռեկրեացիոն տեսանկյունից:

Ստացված ցուցանիշները թույլ են տալիս մարզի տարածքը դասակարգել թույլ և միջին խստության ձմեռների շարքին:

Ստացված տվյալները լիարժեք կարելի է օգտագործել տարածքի կոնֆորտայնության ինտեգրյալ գնահատման համար, որը հնարավորություն կտա բարելավելու մարդու առողջությունը, զարգացնելու առողջապահական տուրիզմը և ռեկրացիան:

**ОПРЕДЕЛЕНИЕ И ОЦЕНКА ОСТРОЙ ДИСКОМФОРТНОСТИ
ЗИМНЕГО СЕЗОНА НА ОСНОВЕ ПОКАЗАТЕЛЕЙ ПОГОДНОЙ
СТРОГОСТИ В ЗАНГЕЗУРСКОМ РЕГИОНЕ**

Давтян П. Г., Давтян Т. П., Варданян А. А.

С помощью формулы, предлагаемой Бодманом, в статье рассчитан показатель погодной строгости Зангезурской области. Последнее дает возможность описать холодную дискомфортность зимнего сезона, который является показателем дискомфорта территории и его влияния на здоровье человека.

Ключевые слова: строгость погоды, дискомфортность, зимний сезон, ландшафтные зоны.

**DEFINITION AND EVALUATION OF ACUTE DISCOMFORT OF WINTER
SEASON BASED ON WEATHER SEVERITY INDEX IN ZANGEZUR
REGION**

Davtyan P. G., Davtyan T. P., Vardanyan A. H.

Using Bodman's formula the weather severity index in Zangezur region is calculated in the statement. The latter makes it possible to describe cold discomfort of winter season. That is the index of territory discomfort and its impact on human health.

Keywords: weather severity, discomfort, winter season, landscape zones.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Архипова И. В. Показатели медико-географической оценки комфортности климата // 6-ое Сибирское совещ-е по климато-экологическому мониторингу: сб. статей. Томск. ИМКЭС. 2005. С. 79–81.
2. Архипова И. В. Оценка климатических условий для жизнедеятельности населения // Современные проблемы

социальной географии: сб. статей / ИГ СО РАН. – Иркутск, 2005. С. 76–78.

3. Архипова И. В., Жукова О. А., Драченин Д. Н., Ротанова И. Н. Анализ биоклиматических и социально-экологических условий для оценки риска здоровью населения Алтайского края, Меж-дународный медико-экологический форум в рамках XI медико-экологической выставки «Человек. Экология. Здоровье». Барнаул: Аз Бука. 2006. С. 35–39.

Տեղեկություններ հեղինակների մասին

Ղապճյան Պ. Պ.- աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ petrosdavtyan@mail.ru

Ղապճյան Տ. Պ.- տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ tigrandavtyan@gmail.com

Վարդանյան Ա. Հ.- դասախոս

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ՝ arm.vard.1993@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 03.09.2021

Գրախուսվել է՝ 17.11.2021